ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «15» դեկտեմբերի 2021թ.

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ի դեմս ղեկավար Գեորգի Ավետիսյանի (այսուհետ՝ Պատվիրատու), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ն ի դեմս տնօրեն Արման Գևորգյանի (այսուհետ՝ Կատարող), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, Վարչապետի աշխատակազմը, ի դեմս Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Բագրատ Բաղալյանի (այսուհետ՝ Վճարող) մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի ««Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում լրացում և վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 2019-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի, 01 խմբի, 01 դասի «1213. Տեսչական վերահսկողության ծրագիր» ծրագրի «11010. Տեսչական վերահսկողության շրջանակում սննդամթերքի լաբորատոր հետազոտություն» միջոցառման (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Վճարողը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կատարողին հատկացնել Որոշմամբ նախատեսված մինչև ***5,000,000 (հինգ միլիոն) դրամ*** գումար (ներառյալ ԱԱՀ-ն)՝ իսկ Կատարողը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Կատարողի կողմից իրականացվելիք Ծրագրով նախատեսված միջոցառումները, ներկայացված են Պայմանագրի N 1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու Վճարողին հետ վերադարձնել փոխանցված գումարը ու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կատարողը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. Կատարողից պահանջել Ծրագրի կատարման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4 Հ-8 և տեքստային) եռամսյակային և տարեկան աճողական հաշվետվություններ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը, ինչպես նաև հաշվետվություն՝ դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման վերաբերյալ, մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը:

2.2 Կատարողն իրավունք ունի՝

2.2.1 Վճարողի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառած վնասները:

2.3 Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կատարողին,

2.3.2. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Վճարողի կողմից տրամադրված գումարների՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24 -ի թիվ 725-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.3. կատարել Պատվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. Պայմանագրով սահմանված կարգով Վճարողին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին 2.1.5. կետով սահմանված հաշվետվություններ,

2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Վճարողի և Պատվիրատուի հնարավորությունը՝ վերջիններիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. Վճարողի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կատարողը պարտավորվում է անվճար՝ Վճարողի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները Պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո՝ միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները /խնայողությունները/ վերադարձնել ՀՀ պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 24-ը:

2.4.9. Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարում ներառված ավելացված արժեքի հարկի գծով հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականին ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

3. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

3.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

3.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

3.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4. Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Պայմանագրով Վճարողը պարտավորվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Ծրագրի կատարման համար Կատարողին որպես կանխավճար փոխանցել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարը՝ կազմակերպության կողմից ներկայացված հայտի հիման վրա:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Վճարողի և Պատվիրատուի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

5.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է իր պաշտոնական՝ snund.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:
8.2 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
8.3 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երեք օրինակից, բաղկացած է 8 (ութ) էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:
8.4 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող	Վճարող
ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	Վարչապետի աշխատակազմ
Հասցե՝ ք. Երևան, 0051, Կոմիտասի պող. 49/2	Հասցե՝ 0041, ք.Երևան, Էրեբեունի 12	Հասցե՝ ք. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1
ՀՎՀՀ 00454227	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
	Հ/Հ 900018006149	Հ/Հ 900011039006
	ՀՎՀՀ 00403436	ՀՎՀՀ 02505554
Ղեկավար՝	Տնօրեն՝ ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ	Աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝
ԳԵՈՐԳԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ		ԲԱԳՐԱՏ ԲԱԴԱԼՅԱՆ
Կ.Տ	Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
2021 թվականի դեկտեմբերի 15-ին
կնքված N 1 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/Հ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (հազար դրամ)
1	« Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ»	Շուկայահանված սննդամթերքի տեսակների լաբորատոր փորձաքննությունների իրականացում ՀՀ ԱԱՏՄ-ի միջոցով տրամադրված լաբորատոր նմուշների նկատմամբ:	Նախատեսվում է իրականացնել լաբորատոր փորձարկումներ սննդամթերքի մինչև 87 նմուշների նկատմամբ՝ 57,636.89 դրամ միջին գնով մեկ միավոր նմուշի համար:	Ծրագրի լիարժեք իրագործումից ակնկալվում է ՀՀ ԱԱՏՄ կողմից իրականացվող վերահսկողության ուժեղացման շրջանակներում նախորդ տարիների հետ համեմատ կատարել շուկայահանված սննդամթերքի ավելի լայն տեսակների լաբորատոր փորձաքննություններ և հաճախացնել վերջիններիս պարբերականությունը՝ բացահայտելով անհայտ ծագման, անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերով չուղեկցվող, կասկածելի որակ ունեցող և նույնականացում պահանջող սննդամթերքի առկայության փաստերը և կանխել դրանց իրացումը:	29.12.2021թ.	5,000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ					**5,000.0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ սննդամթերքի անվտանգության
տեսչական մարմին
Հասցե՝ ք. Երևան, 0051,
Կոմիտասի պող. 49/2
ՀՎՀՀ 00454227

Ղեկավար՝ ԳԵՐԻԳԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հանրապետական անասնաբուժասանիտարական և
բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների
կենտրոն»ՊՈԱԿ
Հասցե՝ 0041, ք.Երևան, Էրեբունի 12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018006149
ՀՎՀՀ 00403436
Տնօրեն՝ ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎՃԱՐՈՂ

Վարչապետի աշխատակազմ
Հասցե՝ ք. Երևան, 0051,
Կոմիտասի պող. 49/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033006
ՀՎՀՀ 02505554

Աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ ԲԱԳՐԱՏ ԲԱԴԱԼՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2

2021 թվականի դեկտեմբերի «___» -ին
կնքված N 1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.